

718

U. 28046  
penyhojabe  
ganyuanyu  
Seefe

8(27)

U-88



24 MAY 2005  
2 NOV 2005

(47) Ա. ՍՏՅՆԻ

U-88

UY

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

1720C

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ,  
ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ  
(ձևը հարկրդային գրազների մուտքեկան  
անաչին համագումարում)

3307



1935



Պատ. խմբ. Տ. Խորունի  
Տեխ. խմբ. Տ. Խաչվանյան  
Սրբազրիչ Ա. Արզյան



Պետհրատի տպարան  
Գլավիլիտ 262, պատ. 906  
հրատ. 3388, տիրած 1000



Սորհրդային գրողների համագու-  
մարն անցնում է բացառիկ հաջողու-  
թյամբ և շրջապատված է մեր յերկ-  
րի մեծ ուշադրությամբ:

Դեռ մի քանի ամիս առաջ կային  
մարդիկ, վորոնք տարակուսում էին  
թե պե՞տք է արդյոք գովարել այս  
արտասովոր համագումարը, մի բան  
դուրս կղա՞ր արդյոք գրանից: Նույն  
իսկ համագումարի նախորդակին  
այդպիսի խոսակցություններ էին  
լինում:

Բայց ահա համագումարը բացվեց:  
Համագումարը շարժվեց: Նա հսկա-  
յական թափ առավ: Այժմ արդեն  
այդ համագումարի 13-րդ որն է,  
այն ինչ վոչ մեր հարգելի նախագա-  
հը, վոչ նախագահության ֆլեգմա-



տիկ անդամ Դեմյան Բեդնին և վոչ Ել  
Հոգսերով տարված Բորիս Պաստեր-  
նակը, վոչ վոք չգիտե, թե ինչպես  
կանգնեցնի այժմ այդ համազումա-  
բը, — այնքան բարձրաթիվ ստեղծագոր-  
ծական հարցեր արծարծեց նա, այն-  
քան ստեղծագործական յեռանդ դար-  
պացրեց նա իր ընթացքում :

Համազումարը, անտարակույս,  
հակայական յերեւոյթ կհանդիսա-  
նա և հանդիսանում է այժմ մեր դրա  
կանության մեջ : Բոլորն Ել, և մանա-  
վանդ գրողները, զգում են, վոր հա-  
մազումարից հետո զբաղանությունն  
այլ բան կգառնա, վոր նա կբարձրա-  
նա նոր աստիճանի : Յեւ զբաղանու-  
թյան արագա պատմաբանը զբաղան  
տարեգրությունը հաշվել Վակսի, ի-  
հարկե այսպես, մինչև խորհրդային  
գրողների առաջին համազումարը  
և նրանից սկսած :

Ընկերներ, այս համազումարում  
զտնայում են Խորհրդային Միության  
բոլոր ժողովուրդների գրողները :  
Սյատեղ հաջաբվել են Միության ժո-  
ղովուրդների ամենալուրակյալ ին-  
տելիգենցիայի ներկայացուցիչները :

Նրանք այստեղ են յեկել իրենց հա-  
ղող բոլոր հարցերով : Արդարև, հա-  
մազումարում և՛ Ալեքսեյ Մաքսիմո-  
վիչի գեղուցման մեջ, և՛ Խորհրդային  
Միության առանձին հանրապետու-  
թյունների ներկայացուցիչների գե-  
ղուցումներում, ցայառն կերպով  
պատկերվեց այն ամբողջ ամենահա-  
րուսա փորձը, կուրտուրական այն  
ամբողջ ժառանգությունը, վորը գո-  
յություն ունի մեր հանրապետու-  
թյուններում : Համազումարն ակնա-  
ռու կերպով ցույց տվեց, վոր մեր  
յեղբայրական ընտանիքում ապրում  
են այնպիսի ժողովուրդներ, վորոնք  
իրենց կուրտուրան հաշվում են դա-  
բերով ու հազարամյակներով :  
Մենք, անտարակույս, ավելի հարս-  
տացած դուրս կդանք այս համազու-  
մարից :

Արդեն համազումարից առաջ մեծ  
աշխատանք էր կատարվել Խորհրդա-  
յին Միության ժողովուրդների գրա-  
կանությանը ծանոթանալու ուղղու-  
թյամբ : Սակայն, համազումարում  
մեր լսածի հիման վրա կարելի չէ ա-  
սել, վոր մենք միայն լակտքն ենք

տալրում այն մեծ աշխատանքի, վորի նպատակն է խորհրդային Միութեան ժողովուրդների գրողների փոխադարձ ծանոթացումն ու մերձեցումը, գրողների ծանոթացումը խորհրդային յերկրի ժողովուրդների բարձրագույն մանի հարուստ այն կուլտուրային, վորի մասին լայն ու պարզորոշ գաղափար է տալիս խորհրդային Միութեան գրողների առաջին համագումարը:

Այստեղ հանդես յեկան խորհրդային Միութեան զանազան ժողովուրդների ներկայացուցիչները, զբաղան զանազան հոսանքների ներկայացուցիչները: Նրանք բոլորն ել իրենց ձե վով և իրենց գրականութեան համեմատ ելին դնում ստեղծագործական հարցերը: Սակայն նրանց բոլորին ել միացնում եր մի բան, նրանց բոլոր յերույթները պտտում ելին այն բանի շուրջը, վորի համար պայքար է մղում մեր յերկիրը՝ սոցիալիզմի գործի շուրջը:

Մենք կարող ենք լիակատար իրավունքով ասել, վոր այս համագումարը, վորտեղ հավաքվել են խորհրդա-

յին Միութեան ժողովուրդների ինտելեկտիցիայի լավագույն մասի ներկայացուցիչները, բացի իր գրական նշանակութունից, ունի նաև քաղաքական խոշոր նշանակութուն, վորովհետեւ այդ համագումարը ձեւակերպում ու ամրացնում է արդեն վարուց սկզբած մի պրոցես՝ Խորհրդային ժողովուրդների ինտելիգենցիայի միացումը խորհուրդների դրոշի տակ, սոցիալիզմի դրոշի տակ (ծափեր):

ՄԵՐ ԳԻԾԸ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ԳԻԾԵ Ե

Համագումարում տեղի ունեցավ ստեղծագործական աշխույժ դիսկուսիա: Այստեղ շոշափվեցին զբաղան ստեղծագործութեան բոլոր հարցերը: Այդ է հիմնական տարբերութունն այն ժամանակներից, յերբ զբաղան շարժմանն ուղղութուն եր տալիս ՌԱՊՊ-ը: Դուք հիշում եք, վոր ՌԱՊՊ-ն ունեւ իր «հիմնական դիժը», իր «դիտարկութեան քարտուղարը», իր «հիմնական պլատֆորմը», վոր փորձում էլին փաթաթել բոլոր գրողներին վր-



դին: Դուք հիշում եք նաև այն կատարելի վեճերը, վորոնք ստեղի եյին ունենում այդ պլատֆորմի ամեն մի կետի, ամեն մի ստորակետի շուրջը:

Համկոմկուսի կենտկոմի ասլրիլի 23-ի (1932 թ.) վորոշումը «գրական-պեղարկեսաական կարմակերպու-թյունների վերահատուցման մասին», վերջ գրեց ՌԱՊՊ-ի գրոյության, վորը վերածվել էր խորհրդային գրական-նության հետադա գարգացման արդևակի, հիմք գրեց Խորհրդային Գրողների Միության և բերեց այն քաղաքական ու ստեղծագործական վերելքին, վորի վայրուն ասպացույցն է խորհրդային գրողների համագումարը:

Խորհրդային գրողների ասաջին համագումարում ստեղի յե ունենում ստեղծագործական ազատ վիակուսիա, ազատորեն քննարկվում են ստեղծագործական բոլոր հարցերը: Այս համագումարում, ստեղծագործական հարցերի շուրջը չի ասաջարկվում վոչ մի բանաձեյ, վոր պարտա-

դիր լիներ յուրաքանչյուր գրողի համար:

Յերբ քննարկվում էր համագումարի աշխատանքի ծրագիրը և զեկուցողներ եյին ասաջարկվում այս համագումարի համար հարկալ կագովորման համագումարի այդ ծրագիրը և զեկուցողներին համաձայնեցնում էր մեր կուսակցության հետ: Յես կարծում էմ, վոր այդ գաղտնիք չե վոչ վոքի համար: Սակայն դա բնալ չի նշանակում, վոր ամեն մի զեկուցում, վորպես կանոն, ինչ վոր պլատֆորմ է, վորտեղ վո'չ մի ստորակետ, վո'չ մի խոսք, վո'չ մի փոփոխության յենթակա չե և պարտադիր է նրա անչեղ կատարումը: Այդպես չե, ընկերներ: Դա կլիներ սեղմել ստեղծագործական նարաձեռնությունը:

Մեկ մոա չկան կուսակցության ու կառալարության այնպիսի վորոշումներ, վոր պաշտոնական բնութագրումներ և զնահատումներ տրվեն ասանձին գրողներին, վոր պրոգայիկներին և բանաստեղծներին տրվեն զա



նազան աստիճանի ինչ վոր պատ-  
վանչաններ, շքանչաններ, խրախուս-  
ման նշաններ կամ պախարակման  
ու պարսավանքի նշաններ: Ինձ հայտ  
նի չե նաև կուսակցության ու կա-  
ռավարության վոչ մի վորոշում՝ Մա-  
յակովսկուն «սրբացնելու» մասին:  
Մայակովսկին հզոր բանաստեղծ է,  
հեղատիրության բանաստեղծ, աա-  
կայն մենք վորոշում չունենք, վոր  
մեր ամբողջ խորհրդային պոեզիան  
հավասարենք միմիայն Մայակովս-  
կուն: Յեվ, յեթե բնկեր Բուխարին  
իր զեկուցման մեջ դնահասական ար-  
վեց բանաստեղծների առանձին յեր-  
կերին և ստեղծադրությանը, ա-  
պա այդ բանը նա արեց դարձյալ  
համազումարում ստեղծադրական  
հարցեր արծարծելու կարգով: Այդ  
ամենևին չի նշանակում, վոր այս  
համազումարում ամեն մի բանաս-  
տեղծ ստացալ կուսակցությունից  
կամ կառավարությունից իր պատվա  
նշանը, վորով պետք է հեռանա այս  
համազումարից: Իսկ իրենք Բյուրով-  
բատիզմի մեծադուլն արտահայտու-  
թյունը, իսկ դուք դիտեք, վոր չկա

ավելի անհրաժեշտ պայքարող բյու-  
րովբատիզմի դեմ, քան մեր կուսակ-  
ցությունը:

Մեկ և մեկ հասարակական կար-  
ծիք, ֆնկադատություն, բերեցող-  
ներ, վորոնք անկ են վերջին տարի-  
ներին և վորոնք իրենք շատ լավ են  
հասկանում, քե վո՞ր յերկի ե արժե  
քավոր ու արժանի գովասանիք և վոր  
յերկը՝ արժանի յե պախարակման:

Մակայն յեթե մեզ մոտ, գրականու-  
թյան մեջ, տեղի յե ունենում ազատ  
ստեղծադրական մրցություն և ըս-  
տեղծադրական հարցերի ազատ  
քննարկում, ապա այդ բնավ չի նը-  
շանակում, թե մեզ մոտ վոչ մի գլխ  
ձկա գրականության մեջ: Վո՞չ, ըն-  
կերներ, մենք ունենք վորոշ դիժ մեր  
գրականության մեջ և դրա մասին  
խոսվեց համազումարի համարյա բո-  
լոր յելույթներում: Դրա մասին խոս-  
վեց նաև Ալեքսեյ Մաքսիմովիչի զե-  
կուցման մեջ և կենտկոմի քարտու-  
ղար ընկ. Ժգանովի յելույթում: Մեր  
գլխը՝ դա սոցիալիստական ռեալիզմ  
է (ծափեր):

Դուք ինքնեք, ձեր բանաձևում,

ասացիք, վոր ուզում եք ստեղծել սոցիալիզմի վոզով համակիւած յերկեր: Դա յե խորհրդային գրականու-թյան գիծը: Իսկ բոլոր մնացածում, ազատ ստեղծագործակա՞ն մրցու-թյուն:

Մեզ մոտ չափից դուրս խմատա-կություններ են անում սոցիալիստա-կան ռեալիզմի շուրջը: Սոցիալիստա-կան ռեալիզմը բնաւ ինչ վոր գործիք ներքի հալաքածու չէ, վոր տրվի դը-րողներին՝ գեղարվեստական յերկեր ստեղծելու համար: Մի քանի գրողներ սահանջում են, վոր նրանց տրվի սո-ցիալիստական ռեալիզմի տեսությու-նը բոլոր մանրամասնություններով:

Դուք ինտելիգենցիայի յալազույն մասի ներկայացուցիչներն եք: Ձեռն շատ ե տրվել, նրանից շատ ել կպա-հանջվի»: Յերբ ասում են, թե մեզ պետք ե ցույց տալ սոցիալիստական ռեալիզմը, ապա այստեղ, գրողներին համազումարում, կարող ե լինել մի այն մի պատասխան՝ սոցիալիստա-կան ռեալիզմն ամենից լավ կարող ե ցույց տրվել գեղարվեստական այն

յերկերում, վորոնք ստեղծում են խորհրդային գրողները:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍԻՐՈՎ ՅԵՎ ՀՈԳԱՏՎ ԲՈՒԹՅԱՄԲ

Խորհրդային գրողներին համազումա-րի բնորոշ գիծն այն լարված ուշա-դրբությունն ե, վորով շրջապատել ե համազումարը մեր ամբողջ յերկերը: Ինչ չխոսվեց այն հարցի մասին, վոր Խորհուրդներին յերկրում վոճնացվել են այն անջրպետները, վորոնք անցյալում գեղարվեստագետին անջատում էին ժողովրդից: Սակայն յես կար-ծում եմ, վոր գրողներին շատերն այդ բանն իր ամբողջ ուժով առաջին անգամ գրացին այստեղ, խորհրդա-յին գրողներին համազումարում: Զե-ղանից շատերը միայն այստեղ գրացին, թե ինչպիսի սի-րով, ինչպիսի ուշադրությամբ ե շրջապատում մեր ժողովուրդն իր ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻՆ, ինչպիսի հողատարությամբ ե վերա-բերվում նրան: Դուք տեսնում եք,



Թե ինչպես ամբողջ յերկիրը հետե-  
վում է համադրամարի աշխատանքին,  
Թե ինչպես զգալուն կերպով արձա-  
գանքում է նա գրողների ամեն մի յե-  
լույթին: Այդ ցայտուն կերպով ցու-  
ցադրվեց այստեղ, համադրամարում,  
բանվորների ու կոլտնտեսականների  
բազմաթիվ պատվիրակույթյունների,  
Կարմիր բանակի, նախատորմի, յերի-  
տասարդութան և արվեստի մյուս  
ճյուղերում աշխատողների ներկայա-  
ցուցիչները յելույթներում:


Այդ տեսանք մենք Մոսկվայի կուլ-  
տուրայի և հանգստի պարկում, Կա-  
նաչ Թատրոնում, վորտեղ հավաքվել  
էին Մոսկվայի մի քանի տասնյակ  
հազար պրոլետարները՝ Չերմազին  
վողջունելու խորհրդային գրողների  
համագումարը: Յերբ գրողների այդ  
հանդեսին ներկա գտնվողները տեսան,  
տասնյակ հազարավոր հանդիսատես-  
ներ, այդ հսկայական ամփիթատրոնը  
բաց յերկնքի տակ, այն լուսինը, վոր  
կախված էր այդ ամփիթատրոնի վե-  
րեյը (ընդվորում գրողները հարց ե-  
լին տալիս՝ «Միթե՞ այդ լուսինն ևս  
կախ է սույն պարկի գիրեկտորը»), և

պա նրանցից շատերի յերեվակայու-  
թյան մեջ վերակենդանացան անտիկ  
Հունաստանի անմոռանալի պատկերնե-  
րը, վորտեղ արվեստն անխղճիթոյնն  
կապված էր ժողովրդի հետ:

— Լավ կլիներ, վոր այս բեմում  
բեմադրվեր «Նշխարը», դուրս պըր-  
ծալ այն ժամանակ Ա. Տոլստոյի բե-  
րանից: — Կամ կազմակերպել բանաս-  
տեղծների ու յերգելիչների մրցու-  
թյուն, — ավելացրեց մեկը:

Արդյոք չե՞ք կարծում, ընկերներ,  
վոր այժմ, պատմական զարգացման  
մի այլ աստիճանում, երկիրակամու-  
թյան ու ռադիոյի դարում, մեր  
յերկիրում հաստատված սոցիալիզմի  
ու խորհրդային իշխանության դա-  
րում, մենք հասել ենք արվեստի լա-  
վաղույն ժամանակներին, յերբ ժողո-  
վուրդն ու գեղարվեստադետը կազ-  
մում են մի ամբողջութուն: Մեզ  
մոտ հետզհետե անհետանում են գրա-  
կան այն ճամարտակները, վորոնք ըն-  
դունալրաններում, պինդ փակելով  
դռները, իրար խլացնում են ճոռո՞  
տիրազնություն: Մեր այդ ժողովուրդը  
ճանաչում է իր իրավունքները, նա գոր-

3821





ծարաններում, կոլանտեսուլթյուններում, աներում, ախումբներում և կարմիր բանակում քննարկում և ամեն մի նոր ստեղծագործութիւն: Մեզ մոտ ամեն մի լավ յերկ վաթրկենարար տարածվում և ամբողջ յերկրում՝ Ինչուուսիայից մինչև Սաղազ օվկիանոսի ափերը:

Չուր չէ վոր այտեղ, Համազումաբում, Ա. Մ. ԳՈՐԿՈՒ ղեկուցման մեջ, գրողների յելուլթներում այնքան շատ խոսվեց ժողովրդական ըստեղծագործութիւն մասին: Այո, մեզ ժողովուրդը նորից հրապարակ և հանում իր յերդիչներին և իր նկարիչներին: Ամեն տարի բարձրանում են նորանոյր ուժեր, նոր գրողներ, վորոնք դուրս են գալիս բանվորների և կոլանտեսականների միջից, վորոնք յերբեմն իրենց առաջին ստեղծագործութիւններով հայտնի յեն գառնում ամբողջ յերկրին:

Այսօր ՄՏԱՎՍԿԻՆ պատմում ևր այլ յերիտասարդ գրողների մասին, վորոնց թիվը տարեց-տարի ավելանում և, վորովհետև աճում և մեր կուլտուրան:

Մյուս կողմից, այն ղեկարվետաղետները, վորոնք առաջ մեկուսացած էին, այժմ դալով պրոլետարիատի մոտ և ընդունելով խորհրդային իշխանութիւնն պրատֆորը, մերձավորու հարազատ են դարձել մեր ժողովրդի համար:

Յերբ այտեղ հանդես էին գալիս բանվորների և կոլանտեսականների ներկայացուցիչները, նրանք ասում էին մեզ՝ «նկարագրեցեք մեր աճումը, մեր պայքարը՝ սոցիալիզմի համար»:

Ամեն մի մարդ, վորը վողջունում էր համազումարն այս ամբիոնից, սկսած Մոսկիայի այն կոլանտեսուհուց, վորը խոսում էր հիանալի, դունեղ լեզվով և մինչև Ստալինի անվան գործարանի վարպետը, ստեղծվել են հեղափոխութիւնն կողմից, կովիվել են սոցիալիզմի հաղթանակի համար մրդվող համառ պայքարում:

Յեա վերհիշում եմ մեր քննադատներին մի քանի իմաստակութիւնները, վորոնք պտույտ են գալիս այն մի քանի հիմնական դրուլթների շուրջը, վորով ղեկավարվում են մեր դը-

րողները և իրենց դասադուլթյուններ-  
 րով աշխատում են լուվանդակագուրդի  
 դարձնել այդ դրուլթյունների իմաստը :  
 Հայտնի չե Ենգելսի այն դրուլթը ,  
 թե գեղարվեստագետը պետք է պատ-  
 կերի տիպիկ բնավորությունները և  
 տիպիկ հանդամանքները : Ահա , յեթե  
 խոսենք բանվորների , կոլանտեսական  
 ներքի ու կարմիր բանակի ներկայա-  
 ցուցիչների այն բնավորությունների  
 մասին , վորոնք հանդես յեկան այս-  
 տեղ , այս ամբիտնի վրա , ապա վոչ  
 վոք այնքան ակնառու կերպով չի ար  
 դարացնում Ենգելսի այդ դրուլթը ,  
 ինչպես նրանք , վորովհետեւ այդ բնա  
 վորություններն ստեղծվել են տիաս-  
 նային դասակարգային այն պայքա-  
 րում , վորը ծավալվել է մես յերկ-  
 րում , այս բոլոր տարիներին ընթաց-  
 քում :

Վոմանք այսպես են դասում թե  
 Ենգելսի առաջին դրուլթի հետ տի-  
 պիկ բնավորություններին վերաբեր-  
 յալ դրուլթի հետ մենք կարող ենք  
 հաշտվել : Իսկ ինչ վերաբերվում է  
 տիպիկ հանդամանքներին վերաբեր-  
 յալ յերկրորդ դրուլթին , ապա դա ,

ճիշտն ապա՞ , անտեղի չե : Դա իմ  
 կարծիքով խոչորագույն սխալ է :  
 Մենք չենք կարող հասկանալ , մենք  
 չենք կարող ցույց տալ վոչ մի բնա-  
 վորություն , առանց ցույց տալու ,  
 թե ինչպես է պայքարել այդ մարդը ,  
 ինչպեսի խոչընդոտների , ինչպիսի  
 թշնամիների դեմ է պայքարել , ինչ-  
 պես է կոփվել այդ պայքարում :

Մեր ամբողջ կուսակցությունը , Լե  
 ճիճի-Ստալինի կուսակցությունը ա-  
 ճեց ու կոփվեց սոցիալիզմի համար  
 մղվող պայքարում : Այդ պայքարում  
 կոփվեց և բանվոր դասակարգը : Մեր  
 գեղարվեստագետները պետք է զգաց  
 նել տան այդ բանն իրենց ստեղծա-  
 գործություններում : Նրանք պետք է  
 յերբեմն գտնեն այն փոքր , մանր դը-  
 ծերը , վորոնք ընդդժում են այդ հիմ  
 նականը , մեր յերկրում բնավորու-  
 թյուններ յերևան բերելու ու ստեղծե-  
 յու ասպարիզում :

ԶԵԼՅՈՒՍԿԻՆՅԱՆՆԵՐԸ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊՐՈ-  
 ԼԵՏԱՐԱՏԻ ՊԱՏԿԵՐՆ ԵՆ

Այստեղ հանդես եր յեկել ՈՏՏԻ  
 ՅՈՒԼԵՆՎԻԶ ՇՄԻԴՏԸ : Նա ասաց ,



առաջին հայացքից ինչ վոր պարզ,  
բայց շատ նշանակալի մի բան, վորի  
վրա իմ կարծիքով, պետք է լուրջ ու  
չաղբուժյուն դարձնեն մեր գրողնե-  
րը: Ոտառ Յուլյեֆիչն ասաց՝ «Արկ-  
տիկայում, սառցադաշտի վրա, դժվա  
բացույն տրագիկ պայմաններում,  
վարդկանց ձեռք յերևան յեկան այն  
հասկուրքունները, վորոնք առաջ  
գտնվում էյին նրանց մեջ քագնված  
վիճակում, սակայն վորձնց դաստիա  
րակել եր խորհուրդների յերկիրը»:

Իմ առջև գրված է մի գիրք, վո-  
րը պետք է բաժանել համազումարի  
այստիկրակներին և վորի վրա յես  
կարծում եմ զուր բոլորը ել ուշա-  
դարձյուն կդարձնեք: Դժբարտա-  
բար այդ գրքի մասին փոչ վոք չեո-  
տեց համազումարում: Այդ գիրքը կոչ  
վում է «Ինչպե՞ս փրկեցինք մենք չեկ  
յուակինյաններին»: Խորհրդային Մե-  
ուկյան հերոսները չապասեցին, մի-  
չևի, վոր մեզ գրողները ներշնչվեն  
և նկարագրեն նրանց քաժադործու-  
թյուններն Արկտիկայի սառցադաշ-  
տերում: Նրանք իրենք գործի լժվե-  
ցին և յերկու ամսում իրենք գրեցին

այդ գիրքը: Այստեղ, պարզ ու անպար-  
ճույճ խոսքերով, ուղաշուներից ամեն  
մեկը՝ Լյուսիգեվսկին, Լեվանեվսկին,  
Սլեպնյովը, Մուլոկովը, Կամանինը,  
Վալսոյյանովը, Դորոնինը պատմում  
են իրենց կյանքը, աջն բանը, յի ինչ  
պես են սովորել, ինչպես են կատա-  
րել իրենց հերոսական քաջագործու-  
թյունները:

Դա զարմանալի գիրք է: Դա կյան-  
քի մի հատված է: Դա վերջին ժամա-  
նակներս լույս տեսածների մեջ ամեն  
նահեռաքրքրական գրքերից մեկն է:  
Նրա հրատարակումը վկայում է, վոր  
մեր ժողովուրդն ասպարեզ է հանել  
այնպիսի հերոսներ, վորոնք վոչ միայն  
քաջագործություններ են կատարում,  
այլև ղեկան պատմել իրենց մասին,  
իրենց քաջագործությունները մա-  
սին: Այդ նոր յերկույթ է մեր պրա-  
կանության մեջ: Յերբ զուր աչքի  
անցկացնեք այդ գիրքը, կտեսնեք  
թե ինչ մարդիկ են նրանք: Մեկը  
ծնվել է Մոսկվայի մոտ մի գյու-  
ղում, մյուսը՝ Լենինգրադի մոտ, յեր  
բոլորը՝ Պոլտավայում: Նրանց կյան-  
քի ուղին տարբեր է յեղել: Նրանցից



չատերն իրար չեն հանդիպել մինչևի վանկարեմ և Ուելլեն: Սախաջն այդ տեղ ընկնելով, նրանք սկսել են գործել միասին, վորպես հեղափոխության պողպատակուռ ջոկատը (ծափեր):

Ով է ստեղծել նրանց: Կարգալով այդ գիրքը, դուք կտեսնեք, վոր այդ մարդկանց ստեղծել է հեղափոխությունը:

Յերբ մեր ժողովուրդը մեծարում էր չեւրոսակինյաններին, նա նրանցոյ մեծարում էր վոչ միայն նրանց անձնական արիությունն ու հերոսությունը: Թերեւս այն դրողի մոտ, վորը կակսի նկարագրել այդ քաջագործությունը, նա կպատկերվի, վորպես անձնական հերոսության, անձնական արիության այն որինակներից մեկը, վորոնց թիվը բավական շատ է: Դա մեծագուշն սխալ կլիներ: Վո՛չ: Այդ մարդկանցից ամեն մեկն իր պատմությունն ունի: Սառցադաշտում կատարվածը նույնպես իր պատմությունն ունի: Յերբ մեր յերկիրը մեծարում էր Արկտիկայի հերոսներին, նա տեսնում էր նրանց մեջ իր պատկերը,

սառցադաշտում կատարվածի մեջ նա տեսնում էր խորհուրդների ամբողջ յերկրի պատկերը, հերոսական պրոլետարիատի պատկերը: Այնտեղ դրսեվորվեց յերկու հատկություն, վոր հատկանշում է մեր աշխատավոր մասսաներին՝ դրսեվորվեց—հերոսություն, վոր ցուցաբերեց մեր ժողովուրդը բանվոր դասակարգի ղեկավարությամբ, յերբ նա պատմության մեջ առաջին անգամ ճանապարհ հարթեց դեպի նոր ապագան, դեպի նոր իրավակարգը, և դրսեվորվեց այն մեծագուշն կազմակերպվածությունը, առանց վորի հերոսությունը կտրված կլիներ հողից, հողազուրկ կլիներ, առանց վորի չէին կարող կատարվել այդ բոլոր մեծ գործերը:

### ՍՏԵՂԾԵՆՔ ՄԵՐ ՀՐԱՇԱԳԵՂ ԵՊՈՆԱՅԻՆ ԱՐԺԱՆԻ ՅԵՐԿԵՐ

Դա հոկայական նշանակություն ունի գեղարվեստագետի համար դեղարվեստական ստեղծագործության համար: Կլասիկներից մեկը, վորը վախճանվել է վաղուց, բայց «ներկա

յե» տվյալ համազումարում, ասել էր, վոքո աշն ուեսլիզմը, վորն էր քթի տաս կից դենը չի տեսնում, խեբացնոր Փանտաստիկայից վատ է, վորովհետեւ նա կույր է:

Չեւյուսկին յանների ուրինակը դեզար վեստադետին ստվորեցնում է, վոր չի կարելի սահմանադիտել միայն յուսանկարելով, չի վարելի սահմանադիակել անցքերի արտաքին նկարագրումով: Գեղարվեստագետը պետք է դոնի աշնպիսի դժեր, վորոնք դրոնե վորեն յերեվույթների վոխադարձ հստը, վորոնք ցույց տան, թե վորտեղից է աճել մարդը, վորտեղից են առաջ յեկել այն հասկությունները, վորոնք հնարավորություն են ալել հերոսության հրաչքներ գործելու, կարգակերպվածության աշնպիսի հրաչքներ, վորոնցով հիանում է սոբողջ աշխարհը:

Այստեղ շատ խոսվեց, վոր մեր արվեստը պետք է բովանդակայից լինի: Դա միանդամայն ճիշտ է: Այժմ մեզ մոտ չկան Փորմարիզմի բացահայտ պաշտպաններ: Ճիշտ է, դեռես կան մարդիկ, վորոնք նզովում են Փորմա

րիզմը, և միեւնույն ժամանակ անց են կացնում վերջինս իրենց դրվածքներում, կամ քննադատության մեջ: Այդպիսի դեպքեր, զժախտաբար, դեռ լինում են: Սակայն բովանդակագուրկ արվեստի դեմ մղվող պայքարում, աշնպիսի արվեստի դեմ, վորն արտացոլում է բուրժուական աշխարհի նեխումն ու քայքայումը, մենք պոքեն վճռական հաղթանակ ենք ձեռք բերել: Մեր դեղատրվեստագետը դիտակցում է, վոր նա իր յերկերում պետք է տա վոչ թե պարզապես մի գեղեցիկ սոցետկա, այլ բովանդակայից մի ստեղծագործություն, վորը վոգեչնչի, կոչ անի և առաջ մղի: Յես կարծում եմ, վոր արվեստագետն այն ժամանակ, յերբ նա ստեղծագործում է, յերբ նա ստեղծում է իր յերկը, յերբ նա իր սոբողջ ուժը բարում է, ուզում է, վոր իր ստեղծագործության պատկերները, ամեն մի միտքը, ամեն մի զգացմունքը, ամեն մի խոսքը հասնի ընթերցողի սրբուն: Այդ տեսակետից մեզ որինակ է տալիս Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին: Նրա յերկերը բոլորն էլ կերպված են







ԽՈՐՀՐԿԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԴՐՈՇԸ

(Ճառ Ուկրալիցայի Խորհրդային գրականքի  
համագումարում)

Ընկերքնե՛ր, մենք կտրվեցինք  
մեր անմիջական աշխատանքից  
և չնայած աննպաստ յեղանակին,  
Մոսկվայից թռիչք կատարեցինք այս  
տեղ նրա համար, վորպեսզի մասնակ  
ցենք մեզ համար ուրախ այս անցու-  
ղարձին—ուկրայինական գրողներին  
1-ին համագումարին: Այդ համագու-  
մարը մեզ համար նույնպես ուրախալի  
յե, ինչպես և այստեղ ներկա յեղող բո-  
լորի համար: Մոսկվայի գրողները սա-  
վառնակով թռիչք կատարեցին, չնա-  
յած այն բանին, վոր շատերին նա  
սպառնում էր անահաճո ապրումներ,  
սակայն, վորպեսզի իսկույն հասնեն  
համագումարի բացմանը և բերեն  
Միութենական կազմկոմիտեյի և ուսս  
գրողների վողջույնները (ծափահա-  
րուքյուններ):

Յես պետք է ձեզ վողջունեմ այն



կայմակերպութեան կողմից, ուր յետ  
աշխատում եմ՝ Համկոմկուսի կենտ-  
րոնի կողմից (բուռն ծափահարու-  
թյուններ. ձայներ՝ ԿՅՅՅՅ ԸՆԿ-  
ՍՏԱԼԻՆԸ. ՈՒՌԱ՛) :

Ընկերներ, յերբ մենք լսեցինք այս-  
տեղ բնդարձակ գեկուցումներ ուկրա-  
յինական գրականութեան մասին,  
մենք նրանց մեջ զգացինք վաչ աչ-  
քան փաղաչ տեղի ունեցած պաշքարի  
փառողի հոտը, պաշքար, փոք ուղղ-  
ված եր նացիոնալիստներին գեմ,  
նրանց գեմ, սվքեր ուզում էին դա-  
մաճանել մեր հայրենիքին, դավա-  
ճանել Խորհրդային Միութեանը, թրշ  
համուն մասնել Խորհրդային Ուկ-  
րայինան: Այդ պաշքարը տեղի ու-  
նեցա՞մ մտախի անցյալում մեր աչքերի  
ստաջ, շատերն յեղան նրա մասնակից  
ները, նրա վկաները. նա տեղի ունե-  
ցա՞մ այստեղ և շատերը գիտեն այն  
մարդկանց, փորոնք գտնվեցին բարի-  
կառի այն կողմը, նրանք, փորոնք  
տեղան էլին գնում սոցիալիզմի գոր-  
ծի տակ, նրանք, փորոնք ցանկացան  
դավաճանել Խորհրդային Ուկրայի-  
նային: Ծտտերը խզեցին իրենց անձ-

նական կապերը: Այդ մարդկանց  
դուք ճանաչում ելիք, սակայն, բնկեր  
ներ, այնպիսի հարցերում, ուր խոս-  
քը վերաբերվում է հիմնականին,  
մեր հարադատ, սոցիալիզմի գոր-  
ծին, այնտեղ խնայելու մասին փոշ  
մի խոսք չի կարող լինել, այնտեղ  
անթույլատրելի յե վորեւէ հաշտողա-  
կանություն, այնտեղ պետք է խաչ  
գնես ըս բոլոր փոխհարաբերություն-  
ների վրա և նրանց վրա, սվքեր դա-  
վաճանեցին մեր հայրենիքին, սոցիա-  
տալորները հայրենիքին. այդ դավա-  
ճաններին խնայել չի կարելի և չենք  
խնայի (ծափահարություններ) :

Ընկերներ, վերջին ժամանակներս  
ուժեղացել է հետաքրքրութեանը  
այն բանի հանդեպ, թի ինչ և կա-  
տարվում ուկրայինական խորհրդա-  
յին գրականութեան մեջ, վորովհետեւ  
ուկրայինական խորհրդային գրակա-  
նությունը, վերջին տարիների բնթաց  
բում, ստեղծել է մի շարք խոշոր  
գործեր: Այդ տեսակետից մեր սուս  
գրողներն ել նրանցից սովորելու բան  
ունեն: Ռուս գրողներն սկսում են

ուշադրութեամբ դիտել, թե ինչ է կատարվում այստեղ, Սորհրդային Ռեկրայինայում և բարձրագույն բնական է: Մենք պետք է իրխանակենք մեր փորձը, առաջել ևս, վոր գրականություն թյան դարգացումը, նույնիսկ յեթե վերջնենք առանձին ջոկատները, առանձին բնագրայառներում ընթանում է վոչ միատեսակ: Յեթե, որինակ, ՌՄՖՈՆ-ում, Մոսկվայում, շատ և ավելի շա՛վ ներկայացված է արձակը, անգամ այստեղ, ինչպես յե ծանոթ եմ, վերջին ժամանակներս ավելի ուժեղ է, ասենք գրամատուրգիան, և ապա՝ սրտիկան: Դուք գիտեք, վոր մի շարք գրամատուրգիան գործեր ներկայումս հանդես են յեկել միութենական հրատարակը, մի շարք պիեսներ բեմադրվում են Մոսկվայի թատրոններում, Լենինգրադի թատրոններում: Յե՛վ այստեղ մենք տեսնում ենք ա՛հա, թե ինչպես է նոր կուլտուրա ստեղծվում: Այստեղ գրում են գրողներ իրենց թեմայի մասին, ուկրայինական նյութի մասին: Նշանց հետ է Ռեկրայինայի կուլտուրան, նրանց յես է Ռեկրայինայի աշ

խատավոր մասնակերի պայքարի փորձը, նրանք գրում են ուկրայինական լեզվով, այնուամենայնիվ նրանց մի շարք արտադրությունները ստանում են համամիութենական նշանակություն, վորովհետե՛վ այն, ինչի մասին այստեղ էր լեզվով խոսում է գրողը, սա հարազատ գործ է և ընդհանուր է մեզ բարբա համար:

Ընկերներ, մենք այստեղ արդեն խոսեցինք այն պիեսների մասին, վորոնք ներկայումս բեմադրվում են Մոսկվայում և Լենինգրադում գրանք են ընկ. ընկ. Միկիտենկոյի, Կորնեյչուկի, Կոչերգի պիեսները: Պետք է ձեզ ասեմ, վոր վերջին ժամանակներս գրողների համամիութենական համագումարի առթիվ հրատարակվում են ուկրայինական արձակագիրների մի շարք գործերը: Թարգմանված են ընկ. ընկ. Պանչայի, Կուզմիշի, Կուպիլենկոյի գործերը: Չափազանց ուժեղ կերպով թարգմանական գրականության մեջ հանդես է յեկել ուկրայինական սրտիկան: Մական սա միայն սկիզբն է: Դուք, հատմանաբար լսեցիք Ռեկրայինական



կազմկոմիտեյի հանձնաժողովի աշխատանքների մասին, վորը և հենց նրանով պետք է դրազվի, վորպեսզի Մոսկվայի գրողները կարգան ուկրայինական գրողների դոթժերը, Ռեկրայինայի գրողները կարգան Մոսկվայի գրողների դոթժերը, իորպեսզի նրանք իրար հետ ծանոթանան, յավազույն յերկերի հետ փոխադարձ ծանոթացման կարգով:

Այստեղ յես ձեզ պետք է ասեմ, վոր վերջին ժամանակներս մեզ մոտ յեղան գրողների բալական շատ հանդիպումներ, վորի մասին ժամանակին գրեց Ա. Մ. Գորկին: Յերբ վոր հարցրին գրող Ռիլկեյին, թե նա արդոք ճանաչում է գրող Պիտեր Այյտամբերգին նա պատասխանեց. «կարժես թե յես այդ գրողի հետ ճաշել եմ մի անգամ»: Յեթե խոսենք մեր գրողների և ուկրայինական գրողների ծանոթության մասին, դժբախտաբար, մինչեղ այժմ. նա հաճախ կատարվում է ճաշկերույթի կարգով թե Մոսկվայում և թե այստեղ, սակայն միմյանց գրվածքները քիչ են կարդում: Գրողների Միությունը

վարպես ստեղծագործական կոլեկտիվ, լատարժանավույն, կրարձրանա միմիայն այն ժամանակ, յերբ գրողների ծանոթությունը կլինի վոր միայն հանդիսավոր հանդիպումների կարգով, այլ կլինի հիմնական ծանոթություն նրանց գրական գործերի հետ, նրանց արտադրությունների փոխադարձ ստուգման և փոխադարձ բնագատության հետ: Յես ձեզ պետք է ասեմ, վոր այս տեսակետից ուկրայինական հանձնաժողովի աշխատանքը դեռևս չի վերջացել: Մեզ մոտ յեղավ հանդիսավոր կարգով մի հանդիպում ևս, ուր ուկրայինական գրողները հանդես յեկան կոմ. ախալե միայում: Յեղան նաև ժողովներ, ուր բնկ բնկ Գլադկովը և Բեդիմենյուկին ղեկուցումներ կարդացին ուկրայինական գրողների ստեղծագործությունների մասին. այդ աշխատանքը պետք է շարունակել: Մինչեղ համատարալում մենք պիտի կարճակերպենք նման փոխադարձ մի շարք յեղեկություններ, ուր Մոսկվայի մեր գրողները պետք է բնագատեն ուկրա-

յինական գրողներին, իսկ ուկրայինա-  
կան գրողները քննադատեն Մոսկվա-  
յի գրողներին: Յես կարծում եմ,  
վոր այսպիսի բնույթի ստեղծագոր-  
ծական հանդիպումները բացի լայն  
ուբիշ վոչինչ չեն տա և այս գործը  
պետք է ամեն կերպ վնասեն և  
զարգացնել:

Ընկերներ, այստեղ բարձրագույն  
կերպերի մեջ զարմացական հարց ծա-  
ղեց, թե ինչո՞ւ այսպես յերկար է  
նախապատրաստվում գրողների հա-  
մամիութենական համագումարը: Յեն  
թաղարվում եր համագումարը բաց ա-  
նել գեռես անցյալ տարվա աշնանը,  
ուսկայն համագումարի բացումը նշա-  
նակված է այս տարվա ոգոտոտի  
15-ին: Շատերը հարց են տալիս, թե  
մի՞թե սա արդեն բավական լուրջ  
նախապատրաստութուն չէ: Ինչո՞ւմ  
է բանը, ինչո՞ւ յե հետաձգվում  
համագումարը: Վորովհետեւ գրող-  
ներին համամիութենական աստղին  
համագումարը չի կարելի գիտել վոր  
պես հերթական հանդես, կամ վոր-  
պես հերթական մի կոնֆերանսիս,  
կամ պարզապես վորպես գրողներին

«գորահանդես—ալլեյ», ուր պետք է  
հանդես դան մեկը մյուսի յետեվից  
մեր Միության տրիբունի վրա՝  
Մոսկվայում, և խոսեն իրենց ստեղ-  
ծագործական ղեկավարացիաների մա-  
սին: Բանը, ընկերներ, սրանում չէ:  
Բանն այն է, վոր խորհրդային դրա-  
կանությունը համագումարի շեմքը  
թեևակախելով, պետք է այլ կերպ դառ-  
նա: Բանն այն է, վորպեսզի յուրա-  
քանչյուր գրող, գնալով գրողներին  
համագումարից պարզ ու խորը համո  
զում ունենա այն մասին, թե ինչպես  
պիտի աշխատի, ինչպես պիտի գրի,  
ինչպիսի՞ մեթոդներ պետք է նա կի-  
րառի իր ստեղծագործության մեջ:

Մեր գրողների միությունը ստեղ-  
ծագործական կազմակերպություն է,  
նա այժմ պետք է գնի հատկապես  
ստեղծագործական կարգի հարցեր,  
ինչպես պետք է աշխատի գրողը, ին-  
չի վրա պիտի աշխատի,— սրանք  
չատ խոշոր հարցեր են: Յեպ, ընկեր-  
ներ, այս հարցերը կենսական հար-  
ցեր են գրողի համար: Առաջ, նախ-  
քան հեղափոխությունը, այս հարցե-  
րը վճուում էյին պարզ կերպով.— զը



բողջ թողնված եր ինքն իրեն, նա  
միայնակ եր, նա զիմանում եր մրցու  
թյանը, նա ստիպված եր ինքը հար-  
թել իր ճանապարհը: Բարձրագույն  
զանգներ խորտակվեցին, և մենք գի-  
տենք նման բարձրագույն խորտակ-  
ված տաղանդներ, բարձրագույն մար-  
դիկ կոսպրել են իրենց մեջքը, ծառա-  
յության են գնացել շահագործողնե-  
րի՝ տիրապետող դասակարգի մոտ:  
Յե՛վ միմիայն ամենից ուժեղներին եր  
հաջողվում ճանապարհ հարթել ի-  
րենց համար և նվաճել իրենց տեղը:  
Դա մեր ճանապարհը չե:

Մենք վողջ կյանքը կարճակերպում  
ենք նոր ձևով: Յե՛վ գրողներին կապ-  
մակերպության խնդիրը կայանում և  
հենց նրանում, վարպետի ոգնի չի-  
քիտաստարող գրողների դարձացմանը,  
նրանց կատարելագործմանը, ոգնի  
նրանց տիրապետել գրելու ճիրքին ու  
վարպետությանը, հասկապես սակե  
ծագործական ստուգման կարգով, վո-  
խադարձ զննիչական քննադատու-  
թյան կարգով, արձակեցելով վոխադետի  
այս ձևով տտեղծվի ըստ հնարավորին  
ամենի բարենպաստ պայմաններ՝ մե՛

խաբհրդացին գրականության պար-  
զացման համար: Մրանումն է ահա  
գործը: Դրա համար ել գրողներին  
համազումարի առնչությամբ աշակե  
մանրամասն են մշակվում բոլոր հար-  
ցերը, և այս ժամանակամիջոցում  
չատ բան է արված: Այս ժամանակա-  
րնթացքում վճռված է վոչ թե հասա-  
րակ, այլ խոշորագույն քաղաքական  
հարց՝ այն մասին, թե արժ պետք է  
մանի գրողների միության մեջ: Յե՛վ  
չնորհիվ կատարված աշխատանքի,  
մենք տեսնում ենք, վոր միությունն  
արդեն ստեղծված է, վոր այս տարի-  
ներին ընթացքում գրողները ծանոթա-  
յան իրար հետ, խմացան, թե ում  
պետք է ընդունել, ում չպետք է ըն-  
դունել, վորումհետև ջն վոր կարող են  
լինել, և իրար շատ են յեղել ա-  
մեն տեսակի կեղծ գրողներ, վո-  
րոնք ցանկացել են ունենալ անդա-  
մատոմս, վորպեսզի ամեն տեսակի ա-  
յմաններ ստանան, վորպեսզի շորթե-  
լով գրադվեն: Այդ մարդիկ վարկո-  
րեկում եյին գրողների կազմակերպու-  
թյանը. մենք կարողացանք նրանց հե-  
տացնել, նրանցից ազատվել: Յե՛վ

այժմ Վենիսդրազում, Մոսկւայում և  
այստեղ, Ուկրայիցնայում ընդունելու  
թյունը գրողներին միության մեջ հա-  
մեմատաբար սահուն անցավ, վորով  
հետև դրան նախորդեց նախապատ-  
րաստական մեծ աշխատանք:

Վերցրեք դուք այնպիսի գործ, ինչ  
պիտին և առանձին հանրապետու-  
թյուններին գրողներին ստեղծագործու-  
թյան ուսումնասիրութունը: Չե՞  
վոր այդ բանն առաջ մեղ մոտ գոյու-  
թյուն չուներ: Սոսում ելին ուկրայի-  
նական գրականության մասին, բելո-  
ռուսական գրականության մասին,  
սակայն չէին պատկերացնում ի-  
րենց, թե կոնկրետ կերպով ինչո՞ւմն  
և արտահայտվում այդ ուկրայինակյոն  
գրականությունը, բելոռուսական գր-  
ականությունը, վրացական գրակա-  
նությունը և այլն: Ա. Մ. Գորկու  
նախաձեռնությամբ գրողներին միու-  
թենական Կազմկոմիտեն ստեղծեց  
հատուկ հանձնաժողով, վորը անց-  
կացրեց այս աշխատանքը մեր ազգա-  
յին հանրապետություններին ստեղծա-  
գործություններին հետ ծանոթանալու

ուզողությամբ: Այս աշխատանքը դեռ  
ևս չի ավարտվել, սակայն, համե-  
նայն դեպս և այս տեսակետից ար-  
դեն շատ բան է արված՝ պարզելու  
առանձին հանրապետություններին  
ստեղծագործական կազմերը, պարզե-  
լու հիմնական յերկերը և գրական-  
ուզողությունները: Այս աշխատանքը  
ևս, նույնպես, խոչոր աշխատանք է:

Գրողներին միության կանոնագրու-  
թյունը, սցիալիստական, ուսալիգ-  
մի հարցերը, պոեզիայի, դրամայի,  
արձակի հարցերը, այս բոլորը քըն-  
նարկված են ստեղծագործական խոր-  
հըրդակցություններում, վորոնք վեր-  
ջին ժամանակներս տեղի ունեցան  
Մոսկվայում և Սարկովում: Յեվ, ըն-  
կերներ, յեթե խոսենք այն մասին,  
թե ինչ նշանաբանի սակ է անցնում  
մեր համագումարի աշխատանքը,  
մենք տեսնում ենք, վոր առաջին՝ այս  
տեղ իր հաստատուն տեղն է դրավել  
ինքնաքննադատությանը, վորը բա-  
մական աշխուժ արձագանք է առաջ  
բերել թե դասլիճում և թե նախադա



հուժարան մեջ. ինքնաքննադատու-  
թյամբ են հանդես գալիս թե զեկու-  
ցողները և թե մտքերի փոխանակու-  
թյամբ մասնակցողները: Սա լավ  
գործ է: Յերկրորդ հարցը, դա ար-  
տագրության փորակի հարցն է: Այս  
հարցը ներկայումս հիմնական հար-  
ցերից մեկն է:

Մեկանում շատ ընկերներ գտնում  
են, փոքր գրականությունը դա միայն  
տաղանդի գործ է, փոքր բազմական և  
տաղանդ ունենալ և արդեն ամեն ինչ  
ապահովված է: Իժմախոտաբար, այս  
տեսակի հայացքներ պատահում են և  
ներկայումս: Ի հարկե, գրականու-  
թյունը տաղանդի գործ է և առանց  
տաղանդի չի կարող լավ գրող լինել:  
Մակայն, ընկերներ, պատկերացրեք  
ձեզ տաղանդ դիտուժյան մեջ, տեսի-  
նիկայի մեջ, տաղանդ, փոքր գինված  
չլինելու բարձրագույն մասթեմատիկայի  
դիտուժյամբ, ֆիզիկայի, քիմիայի և  
մի շարք այլ դիտուժյուններով: Հնա-  
րավո՞ր և արդյոք նման տաղանդ  
ներկայումս ճշգրիտ դիտուժյունների  
բնագաղափարով: Անհնար և այդ, դա  
անխնայաբար է, և մեներ շատ լավ գի-

տենք այդ և հասկանում ենք: Սա-  
կայն, յերբ խոսքը գրականության և  
վերաբերում, մենք մինչև այժմ ևլ  
դեռևս հանդիպում ենք այնպիսի կար-  
ծիքի, թե բավական և տաղանդ ու-  
նենալ, բավական և ունենալ փորոշ  
չափով Փանտոպիս և յերեվակայու-  
թյուն և դուք արդեն պատրաստի գը-  
րող եք: Կարելի չի նստել և գրել ու  
մրել: Սա հակայական սխալ է: Իրժ-  
մախոտաբար, այս հայացքը պոյու-  
թյուն ունի մինչև այժմ, նրա դեմ  
համառորեն պայքարեց Ա. Մ. Գոր-  
կին, փորն այս թեմայի շուրջը շատ  
ուշ մի շարք հոգվածներ գրեց: Յեզ  
սա բոլորովին ճիշտ է: Այդ տեսակի  
յերթոտասարգ գրողները հիշեցնում են  
մի քանի տաղանդավոր ինքնուաների:  
Ինձ առիթ է յեղել լսելու այն մա-  
սին, փոքր Սիրիբի ինչ-փոքր խուլ ան-  
կշունում գտնվել և այնպիսի ինքնուո-  
տաղանդ, փոքր հնարել և ժամացույ-  
ցի մեխանիզմ՝ առանց յերբեք ժամա-  
ցույց տեսնելու: Ի հարկե, սա տա-  
ղանդավոր մարդ է: Կամ պատմում  
են մի տաղանդլի մասին, փոքր չիմա-  
նալով նորից գտել և վերլուծական

յերկրաչափությունը :

Այս յերկու գեղաբերն ել առաջ են բե-  
րում եւ՛ ժպտաւ եւ՛ վիշտ : Այս յերե-  
վույթները վկայում են ուժերի ալի-  
ւորդ ծախսման մասին, և ընդդժում  
են անկուրտութեան վասնդ :

Յեւ յեթե խոսենք գրողներէ մա-  
սին, այն ժամանակ մեզ հարկա-  
վոր չեն այնպիսի գրողներ, վորոնք  
պետք է նորից հնարեն ժամացույցի  
մեխանիզմը : Մենք, իհարկէ, կարող  
ենք հենվելով յեղածի վրա սպասել  
մի շարք առաքանդավոր պատմվածքնե-  
րի : Բայց մի՞ թե այս առաքանդավոր  
պատմվածքներն առաջ են մղում գրա-  
կանությունը : Յեւ մի՞ թե բանն այն  
է, վոր մարդիկ կվրեն ևս 2-3 առաջն  
դավոր պատմվածքներ : Դրա մեջ  
չէ խորհրդային գրականութեան նը-  
շանակությունը : Տաղանդի գործը  
ինչ վոր նոր բան ստեղծելու մեջ է  
կայանում, առաջնորդ գործն է առաջ  
չարժվել, առաջ գնալ՝ հենվելով ար-  
դեն նախաձեռն կուրտուրայի վրա : Ա-  
հա թե ինչումն է բանը : Յեւ գրա-  
համար ել կուրտուրայի դժով, գրող-  
ներին նախապատրաստելու դժով, նք

բան վարպետութեամբ զինելու դժով,  
այդ բոլոր հարցերի ծանոթութեամբ,  
— սա հարկավոր է այժմ ընդդժել զը-  
րողներէ համամիութենական համա-  
գումարից առաջ, — մենք պետք է ող-  
նենք մեր գրողներին, վորովհետեւ  
նրանց մեջ կան շատ յերկուսարդ-  
ներ, բարձրակի վայելիս մարդիկ,  
վորոնք չեն պատկերացնում գրողի  
վարպետութեան վողջ բարբությունը,  
վորոնք մտածում են, թե դա հասա-  
րակ բան է :

Մեր գործն է ողնել նրանց ուղե-  
լու իրենց սխալները, քննադատել նը-  
բանց, յերբեմն խիստ քննադատել, յի-  
թե նրանք պարծենում են, վոր կարն  
լի յի շտապով, վորտքի վրա լսով յեր-  
կեր ստեղծել :

Այստեղ, այսոք հանդես յեկալ  
ընկ. Կրուչնիցկին և խոսեց այն մա-  
սին, թե ինչպէս իրեն պես մի մար-  
դու, վոր առաջին անգամ ընկնելով  
Սորհրդային Միութեան մեջ, ինչպէս  
ինքն է ասում, շքեցրել է գտումը,  
թե ինչպէս անցել է այդ գտումը գե-  
կուցումներով : Սա, ընկ. Կրուչնից  
կի, գտում չէ, սա ինքնաքննադատու



թ յուն է, առանց վորի մենք ապրել  
չենք կարող, վորովհետև նա, ով չի  
յենեթարկվում ինքնաքննադատության  
ով ընդունակ չե ինքն իրեն քննադա-  
տելու և ում չեն քննադատում, նա  
փոռում է իր արմատի մեջ: Այստեղ  
արդեն փոչ մի չարժուած չի լինի, վո-  
րովհետև ստեղծվում է հոտած մթնո  
լարտ: Մենք չենք ուզում այստեղ հո  
տած մթնոլարտ, մենք ուզում ենք,  
վորպեսզի մեզ մտա, խորհրդային դո-  
րականության մեջ, միշտ լինի թագմ,  
ստող յո, վորպեսզի մեր պրոպաները  
չնչեն վողջ թոքերով և վորպեսզի նր  
րանք ամբանան և ամբապնեն մեր  
խորհրդային գրականության յերթաւ  
սարդ սրդանիղմը:

Ընկերներ, կարեւորագույն հարցե-  
րեց մեկը, վորի մասին պետք է խոս  
վի համապատասխան, դա սոցիալիս-  
տական սալիղմի հարցն է: Վերջին  
ժամանակներս սոցիալիստ. տեսլիղմի  
հարցի մասին շատ ամելարդ խոսակցու  
թ յուններ են յեղել: Յեա կատելի, վոր  
այստեղ կա յերկու տենդենց. կամ ո  
մեն բնութի բնդհանուր առժամբ փի-  
լիսոփայել, դոս տալ գլխի այն մա-

սին, թե ինչ է սոցիալիստական ռեա  
լիղմը, ամեն տեսակի վերացական  
կարծիքներ և բնորոշումներ վորոնք  
չեն կապվում գրական պրակտիկայի  
հետ, կամ փորձ են անում սոցիալիս-  
տական ռեալիղմն ինչ վոր յարդիկնե-  
րով փոխարինել և կայցնել այդ յար-  
իկները Փրակոնի վրա՝ ինչ բոյան-  
գրականությամբ ել լինի և վորքան էլ  
նա վատ հոտ արձակի:

Յեթե խոսենք գրողների մասին,  
թե այդ տեսակետից ինչ է պահանջ-  
վում նարանցից, այդ դեպքում դրա  
պատասխանը չարագանց պարզ և կոն  
կրետ կերպով արտահայտված է խոր  
հրդային գրողների միության կանո-  
նադրության մեջ: Այդ կետը, ինձ  
թվում է, պետք է համարել վորպես  
հիմնական կետ: Այստեղ հետևյալ  
կերպ է ասվում, — «Սոցիալիստական  
սեռլիղմը հանդիսանում է խորհրդա  
յին դեղարկիստական գրականության  
և գրական քննադատության հիմնա-  
կան մեթոդը, վորը պահանջում է ար  
վեստագետից իրականությունը պատ  
կերացնել ճշգրիտ, պատմականորեն,  
կանկրետ՝ իր հեղափոխական գարդաց  
ման մեջ»:

Այս նշանակում է, վոր զբողից ամենից առաջ պահանջվում է, վորպես զի նա տեսնի այդ իրականությունը: Գրողից պահանջվում է, վոր նա տեսնի, թե ուր է գնում, ուր է ուղղվում, ուր է առաջ շարժվում այդ իրականությունը, տեսնի նրա հեղափոխական բովանդակությունը, վորովհետև առանց զրան ընդհանրապես դժվար է գրել: Գրողից պահանջվում է, վորպեսզի նա ճանաչի այդ իրականությունը: Ահա սա այն պահանջն է, վոր զբովում է գրողներին առաջ:

Յերբ զբողներին հետ ունեցած զբույցում ընկ. Ստալինը խոսեց սոցիալիստական սեպիզմի վերաբերյալ, նա հասկապես ընդդժեց, վոր այս հարցում անթույլատրելի յե ամեն տեսակի փիլիսոփայելը:

Մենք չենք պահանջում մարդկանցից, վորպեսզի նրանք պարտադիր կերպով կիրառեն մատերիալիստական գիտելիքախալի մեթոդը, կամ ելին ինչ վոր իրաւ բարդ, գիտական մեխանիզմներ: Մենք պահանջում ենք, վորպեսզի զբողը տեսնի մեր իրականությունը՝ իր հեղափոխական

զարգացման մեջ, տեսնի նրա հիմնական տեսչեցները, տեսնի թե ինչի յե տանում այդ զարգացումը, յերբ նա պատկերացնում է այդ իրականությունը, անհրաժեշտ է, վորպեսզի նրա յերկը ևս կոչ անի դեպի առաջ, վոր նա ցույց տա բորբոսումն ու հնի անպետքությունը, և՛ միաժամանակ վողեորին նոր հասարակարգի համար պայքարելու դործում, վորպեսզի այն ամրապնդի այդ նոր հասարակարգը մարդկանց գիտակցության մեջ:

Յեթե խոսենք քննադատության մասին, այն մասին, թե մեր քննադատությունն ինչպես պետք է մոտենա սոցիալիստական սեպիզմի հարցերին, ապա յես կարծում եմ, վոր քննադատության համար այժմ ամենամեծ դժբախտությունը այդ վերացական փիլիսոփայությունն անկն է: Յեթե ուզում եք ոգնել գրողին, ընկեր քննադատներ, ամենից առաջ պետք է ակտիւ կոնկրետ արտադրության քննարկումից, պետք է ամենից առաջ քննել, թե ինչ է գրել այս կամ այն դործը, և ինչ է պատ-



